հաղորդակից էին դարձնում Եւրոպայի եւ նրա զարգացման մասին իրենց հաւաքած տեղեկութիւններին: Այլ եւ մօտիկութիւնը Եւրոպային եւ հարուստ վիճակը պոլսահայերին դարձնում էին աւելի լուսաւորուած, քան հայկական գաւառներում ապրող զանգուածը:

Մխիթարը Պոլիս ընկաւ 1700 թ. եւ բնակութիւն հաստատեց Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ուր կատարում էր քարոզչի պաշտօն: Այստեղ է գնում նա իր միաբանութեան հիմքը, 1701 թ. Սեպտ. 1-ին: Բայց հիմնադրութիւնից գրեթէ անմիջապէս յետոյ, իբրեւ հետեւանք Եփրեմ Ղափանցի եւ Աւետիք Եւդոկիացի պատրիարքների օրով կաթոլիկացած կամ կաթոլիկութեան համակրող հայերի, ինչպէս անուանում է Եփրեմ պատրիարքը, «Փոանկացեալ քահանաների» դէմ սկսուած հալածանքներին Մխիթարը ստիպուած եղաւ արձակել իր աշակերտներին եւ ապաստան որոնել Կապուչինների վանքում, Ֆրանսական դեսպանատանը կից: Եւ այստեղ դալիս է այն համոզման, որ իր հիմնած վանական միաբանութիւնը անկարելի է պահել Թուրքիայում եւ անհրաժեշտ է փոխադրել որեւէ եւրոպական երկիր, Թուրքիայի սահմաններին մօտիկ մի տեղ: Նա ընտրեց Վենետիկեան հանրապետութեան պատկանող Մորէա կղզին, ուր եւ տեղափոխուեց ծպտուած վաճառականի հագուստով: Նրան հետեւեցին եւ իր աշակերտներն ու հետեւորդները*): 1706 թ. Մխիթարն արդէն տէր է վանքի եւ եկեղեցու Մեդոնա քաղաքում, Մորէա կղզու վրայ: Եւ Կղեմէս ԺԱ. Պապի առաջարկութեամբ ընդունում է վանքի համար սուրբ Բենեդիկտի կարգը:

Մխիթարն ու իր համայնքը Մորէայում երկար չմնացին. 1715 թ. Թուրքիայի եւ Վենետիկի միջեւ ծագեց պատերազմ, եւ Մխիթարը ստիպուած եղաւ թողնել վանքն ու ապաստան փնտռել Վենետիկում, ուր, 1717 թ. Սեպտ. 8-ին, Հանրապետութեան Խորհրդից ստանում է սկզբում սոսկ իբրեւ բնակավայր, ապա ի սեփականութիւն Սուրբ Ղազարի կղզին, որ առաջ բորոտների կայան էր: Այստեղ հիմնուում է վանքը, որ գոյութիւն ունի մինչեւ այսօր:

Հետզհետէ Մխիթարի մօտ հաւաքւում են նորերը: Կառուցւում են մի շարք վանական շէնքեր, տպարան է հիմնուում, նախապէս քաղաքում, եւ սկիզբ են առնում մի շարք կրթական-մշակութային հիմնարկութիւններ, որոնք հնարաւորութիւն տուին Մխիթարեան միաբանութեան դրաւել ու դարերով պահպանել առաջնակարգ մի տեղ հայերի ազգային-կրթական կեանքում: Մխիթարը միաբանութեան գլուխ մնաց մինչեւ իր մահը, 1749 թ. Ապր. 27-ին:

Մխիթարի յարաբերութիւնները կաթոլիկ եկեղեցու հետ, հէնց գործունէութեան առաջին քայլերից Թուրքիայի սահմաններից դուրս, այնքան էլ փայլուն չէին: Հռոմը դժկամակութեամբ էր դիտում Մխիթարի եւ իր հետեւորդների քարոզչական գործունէութիւնը (միաբանութեան չորս անդամները գրեթէ միշտ միսիոնարական շրջագայութեան մէջ էին Թուրքահայաստանի զանազան շրջաններում): Վերջնականապէս Վենետիկում հաստատուելուց անմիջապէս յետոյ, Մխիթարը դատի կանչուեց Հաւատի Քարոզչութեան Ժողովի կողմից՝ ամբաստանուելով, որ ուղարկում է անպատրաստ, քիչ զարգացած եւ կաթոլիկ կրօնի մասին անճիշդ տեղեկութիւններ տարածող միսիոնարներ:

Մեղադրանքը խիստ ծանր էր, եւ հետեւանքը կարող էր լինել ոչ միայն միաբանութեան միսիոնարական գործունէութեան արգելումը, այլ եւ վանքի փակումը: Վանքը կաթոլիկ երկրում էր գտնուում, Հռոմը մօտիկ էր եւ վտանգաւոր էր նրա հետ կատակ անել: Մխիթարը շատ լուրջ վերաբերուեց այդ դատաւորութեան, ամէն կերպ պատրաստուեց պաշտպանութեան, ձեռք բերեց ազդեցիկ մարդկանց անունով յանձնարարական նամակներ: Բայց այդ ամէնը հաղիւ թէ բաւական էր, եւ դատին յաջող վախճանը թւում էր խիստ կասկածելի:

Սակայն, այն համակրանքը, որ Մխիթարը ձեռք էր բերել Վենետիկը կառավարող Տանի

*) 1701 թ., վանքի հիմնադրութեան ժամանակ, միաբանութիւնը բաղկացած էր, Մխիթարից զատ, չորս վարդապետներից եւ չորս աշակերտ-եղբայրներից: